ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

N 228- Ա

27 հուլիսի 2015 թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2007 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 8-Ի N 176-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ «ԱՐԾՎԱՆԻՍՏԻ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ԱՌԱՋՆԱՅԻՆ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԵՎ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 36-րդ հոդվածի 2-րդ, 68-րդ հոդվածի 7-րդ և 67-րդ հոդվածի առաջին մասերի, «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 1-ին մասի, Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի ՆՀ-728 հրամանագրի 1.6-րդ կետի դրույթներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի հունվարի 15-ի N 41- Ա որոշման պահանջները

որոշում եմ՝

1. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետի 2007 թվականի հունիսի 8-ի «ՀՀ Գեղարքունիքի մարզի «Արծվանիստի առողջության առաջնային պահպանման կենտրոն» փակ բաժնետիրական ընկերություն հիմնադրման մասին» N 176-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունը՝ որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի «Արծվանիստի առողջության առաջնային պահպանման կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության կանոնադրության 4.2 կետը շարադրել նոր խմբագրությամբ՝

«4.2 Ընկերության կանոնադրական կապիտալը կազմում է 110000 (մեկ հարյուր տաս հազար) դրամ, որը կազմում է 11 (տասնմեկ) հատ 10000 (տասը հազար) դրամ անվանական արժեքով հասարակ (սովորական) բաժնետոմսեր:

Ընկերության թողարկած բոլոր 11 (տասնմեկ) հատ բաժնետոմսերը տեղաբաշխված են, սեփականության իրավունքով պատկանում են Հայաստանի Հանրապետությանը և վճարված են նրա կողմից:

Ընկերության բոլոր բաժնետոմսերը հասարակ (սովորական) են, ոչ փաստաթղթային:»:

2. Հաստատել Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի «Արծվանիստի առողջության առաջնային պահպանման կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության կանոնադրության փոփոխությունը՝ համաձայն հավելված 1-ի:

3. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի «Արծվանիստի առողջության առաջնային պահպանման կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության կանոնադրական կապիտալի նվազեցումը կատարել բաժնետոմսերի հետգնման և մարման միջոցով՝ համաձայն հավելված 2-ի:

4. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի «Արծվանիստի առողջության առաջնային պահպանման կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության տնօրեն Մարիամ Հարությունյանին՝ սեղմ ժամկետում ապահովել Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի «Արծվանիստի առողջության առաջնային պահպանման կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության կանոնադրության փոփոխության պետական գրանցումը:

5. Սույն որոշման կատարման հսկողությունը վերապահել մարզպետի տեղակալ Անդրանիկ Հակոբյանին:

6. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՄԱՐԶՊԵՏ՝ ՌԱՖԻԿ ԳՐԻԳՈՐՅԱՆ